ՆՈՐԸՆԾԱ Տ. ԱՐԱՄ ՔԱՀԱՆԱ ԲՈՅԱՋՅԱՆ



Նորընծա Տ. Արամ քահանա Բոյաջյանը ծնվել է 1928 թվականի հոկտեմբեր ամսի 30-ին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում։ Իր ուսումը ստացել է տեղի Գալստյան ազգային միջնակարգ վարժարանում, որի տասնամյա շրջանն ավարտել է փայլուն կերպով։ Իր մանկության օրերին կրոնական կոչում զգալով իր մեջ, և ունենալով դաշնակավոր ձայն, յոթ տարեկանից սկսյալ կանոնավոր հաճախել է Եգիպտոսի երջանկահիշատակ Տ. Թորգոմ սրբազան արքեպիսկոպոս Գուշակյանի ջանքերով կառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ հոյակապ եկեղեցին։ Իր հետևողական և նվիրյալ ծառայության ու քաղցրահնչյուն ձայնի շնորհիվ արժանացել է Կահիրեի եկեղեցասեր ազգայիններին գնահատանքին և դպրապետ Ղազարոս Ղազարոսյանի մասնավոր հոգածության, որի շնորհիվ նրան հաջողվել է տիրանալ եկեղեցական երգեցողության։

1947 թվականին Մայր Հայրենիք ներգաղթելով, հաստատվել է Լենինականում և միևնույն նվիրվածությամբ շարունակել է ծառայել տեղի Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում, որտեղ էլ արժանացել է Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի համակրանքին և ներկայիս առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գևորգ ծայրագույն վարդապետ Վարթանը, գնահատելու համար նրա նվիրյալ ծառայությունը և ընդառաջելով Լենինականի հավատացյալների բազձանքին, դիմել է Գերագույն Հոգևոր Խորհրդին՝ նրան քահանա ձեռնադրելու համար։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, հունիս ամսի 26-ին, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում, հավատացյալների բազմության ներկայությամբ նրան շնորհվել է քահանայական կոչում։ Նորընծան, իր ավագանի անունով, վերանվանվել է Տ. Արամ։

Տ. Արամի քահանայական ձեռնադրությամբ, Լենինականի քահանայական դասը օժտված կլինի իր կոչման գիտակից, համեստ մի հոգևոր սպասավորով։